ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅԵՐԻ ՆԵՐԳԱՂԹԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ (1921—1925)

Հ. ՈՒ. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

Առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմը և դաշնակների տիրապետությունը լիակատար բայքայման էին հասցրել Հայաստանը, երբ երկրում հաստատվեց Սովետական իշխանությունը։

Հայաստանի տերիտորիայում գրեթե չկար մի անկյուն, որ լցված չլիներ Արևմտյան Հայաստանից և Թուրքիայի զանազան վայրերից եկած գաղթականներով։ Երևանում, Էջմիածնում, Ալեքսանդրապոլում և այլ քաղաքներում թափառում էին տասնյակ հազարավոր որբ ու անապաստան երեխաներ։ Այսպիսի պայմաններում բնավ պատահական չէր, որ ամենուրեք մոլեգնում էին սովն ու հոմատարությունները, որոնք օրական հարյուրավոր մարդկային կյանքեր էին տանում։

Իր գոյության առաջին իսկ օրերին Սովետական իշխանությունը ձեռնամուխ եղավ երկրում կուտակված գաղթականության հարցի արմատական լուծմանը և կարճ ժամանակամիջոցում Սովետական Ռուսաստանի օգնությամբ կարգավորեց այն։ Այս հանդամանքը գաղութահայության մեջ առաջ բերեց «դեպի տուն, դեպի հայրենիք, դեպի Հայաստան» ձգտումը։ Ընդառաջելով տենդագին հայ աշխատավորների այդ ցանկությանը, Սովետական կառավարությունը 1921 թ. վերջերին և 1922 թ. սկզբներին Հայաստան տեղափոխեց և հնարավոր ամեն ինչով ապահովեց Միջագետքում կորստյան դատապարտված ավելի քան 9000 հայ գաղթականների[1]։

1923 թ. Վանի շրջաններից և այլ վայրերից Հայաստան ներգաղթեցին մոտ 1000 հոգի[2]։ Սփյուռքահայերի ներգաղթը Սովետական Հայաստան մասսայական բնույթ է ստանում հատկապես 1924 թ. սկսած։ Այդ շրջանում էլ ավելի են բազմապատկվում այն դիմումներն ու նամակները, որ ուղարկում էին գաղութահայերը Հայաստան ներգաղթելու բուռն ցանկությամբ։

1923 թ. մարտի 20-ին Ալեքսանդրիայից մի խումբ հայ տարագիրներ գրում էին. «Եգիպտահայ գաղութի մեջ ապրող հայրենակիցներն շատեր կփափագին փոխադրվիլ Խորհրդային Հայաստան իրենց ամբողջ ունեցածով, ձանձրացած ըլլալով օտարներու ծառայելե, անոնց գյուղերը և քաղաքները շենացնելե, մանավանդ վերջերս հայ թերթերու մեջ երևցած կարգ մը գրությունները Խորհրդային Հայաստանի մասին ավելի մեծ զարկ տվին այս մտածմանը»[3]։

Այս տրամադրություններն ու ցանկությունները օրըստօրե ուժեղանում էին և արձագանք գտնում հայաբնակ վայրերում՝ Սիրիա, Եգիպտոս, Հունաստան, Բուլղարիա, Ռումինիա, Ֆրանսիա, ԱՄՆ, Արգենտինա և այլուր։ Նամակների ու դիմումների հեղինակները մեծ մասամբ աշխատավոր մարդիկ էին, հաճախ կիսագրագետ։ Նրանց դիմումները երբեմն զարմացնում էին իրենց միամտությամբ, բայց և միաժամանակ գրավում իրենց պարզությամբ և անկեղծությամբ։ Դիմում էին ամեն տեսակ արհեստի ու զբաղմունքի տեր մարդիկ և յուրաքանչյուրն իր համառոտ կենսագրականից հետո հավաստիացնում էր, որ «բեռ մը չպիտի ըլլա Խորհրդային կառավարության վրա», այլ իր ուժերով հաղորդակից կլինի շինարար աշխատանքին և օգտակար գործակից իր հայրենիքին։

1924 թ. հունվարի 9-ին Աթենքից մի հայ աշխատավոր ՀՍԽՀ ԺողկոմԽորհին գրում էր. «Սրտի անսահման ուրախությամբ այսօր կուգամ հայտնելու այն փափագը, զոր ծնունդ է առած

---

[1] Այդ մասին մանրամասն տե՛ս Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. դիտ). № 3, էջ 3—20։

[2] Տե՛ս Հայկական ՍՍՌ ՀՌԿՊԱ, ֆ. 40/113, ց. 3, գ. 494, թ. 33—35։

[3] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 16 մարտի, 1924, № 63։

հայրենարաղձ կրծքիս տակ։ Այդ փափագը մեր դարավոր երազներու իրականացման արդյունքն է։ Բան մը միայն,— Հայաստան երթալ, ուրիշ ոչինչ»[1]։

1924 թ. ապրիլի 15-ին Բեյրութից մի խումբ հայ արհեստավորներ ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահ Լուկաշինին (Ս. Սրապիոնյան) գրում են. «Փափագելով հայրենիքի հողին վերա վերաշինել մեր ավերված բույները, մենք, 4—6 ընտանիքներ՝ բազկացյալ 4—5 հոգիե յուրաքանչյուր ընտանիք և արհեստավոր՝ որպես դերձակ, կոշկակար, մշակ — յազմաճի, կառավարության վրա ոևէ բեռ չենք լրլլա, արդյոք պիտի արտոնեի՞ք մեր հոն դալը և ինչ ձևակերպություններ պետք է արտոնագիրը ստանալու»[2]։

Հայ տարագիրները, որպես օտարազգիներ, բազմաթիվ հալածանքների էին ենթարկվում զանազան կապիտալիստական երկրներում։ Այսպես, բուլղարական կառավարությունը որոշել էր տեղահանել Ֆիլիպեի և Թաթար-Բազարճիկի շրջաններում հողագործությամբ զբաղվող հայերին՝ ծխախոտագործ մակեդոնացի գաղթականներին այնտեղ բնակեցնելու համար[3]։ Առանձնապես ծանր կացության մեջ էին գտնվում Հունաստան ապաստանած հայ տարագիրները։ 1923 թ. հունվարին հունական կառավարության հրատարակած օրենքով բոլոր օտարահպատակները ազատվում էին պետական ծառայությունից, գործարաններից և այլ աշխատավայրերից՝ հույն գաղթականներին աշխատանքով ապահովելու նպատակով։ Հույն գաղթականներին բարեբեր վայրերում տեղավորելու համար հայերին Թրակիայից տեղափոխում էին Մակեդոնիայի և Պելոպոնեսի շրջանները։ Տնտեսական ու քաղաքական անտանելի վիճակի մեջ էին դրվում քիչ թե շատ հարմար տնտեսություն ստեղծած հայ գաղթականները։ Հայ որբերը նույնպես հեռացվում էին հունական քաղաքներից, և ահա Հունաստանի որբանոցների փոքրիկ մանուկները դիմելով Սովետական կառավարությանը, իրենց անվարժ գրիչներով ու մանկական թոթովանքով փորձում էին նկարագրել այն արյունոտ ուղին, որը նրանց հասցրել էր որբանոց և այն տառապանքները, որ նրանք կրում էին այդ հաստատությունների մեջ։ «Տարե՛ք մեզ Հայաստան, տարե՛ք տուն»,— այսպես էին եզրափակում նրանք[4]։

1924 թ. սեպտեմբերի 27-ին Հունաստանից ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահ Լուկաշինին հասցեագրված դիմումի մեջ Աթենքի հայոց Առաջնորդարանի Կենտրոնական վարչությունը, նկարագրելով հունահայ գաղթականության ծանր կացությունը, վերջում գրել էր. «Այս թշվառ գաղթականները իրենց սպառնացող ստույգ մահեն փրկելու միակ միջոցը նկատած ենք անոնց Հայաստան փոխադրվիլը։ Այս եզրակացության կհասնինք մանավանդ տեսնելով գաղթականներու դեպի Հայրենի երկիր ձգտումը ու սերը և օր առաջ հոն նետվելու ջերմ փափագը»[5]։

1924 թ. մայիսի 27-ին Սալոնիկից մի խումբ արհեստավորներ և բանվորներ նամակով դիմում են Լուկաշինին Հայաստան փոխադրվելու թույլտվություն ստանալու համար։ Հունիսի 28-ին, դիմումն ստանալու օրը, Լուկաշինը մակագրել է. «Ուղարկել պատճեն ընկ. Շահվերդյանին[6]. իրրև բանվորների և գործավորների առաջին հերթին վիզա տալ»։

Դիմումի հեղինակները, վերագնահատելով իրենց անցյալը և մերկացնելով արտասահմանյան հայ աշխատավորների ճակատագրի հետ դեռևս խաղացող ազգայնական-բուրժուական պարտիաների շահատակությունները, գրում էին. «Ս ենք երկարաձիգ ու արյունոտ դարեր վերջ ողջունեցինք Խորհրդային Հայաստանը և Անդրկովկասյան Միության Կարմիր ու փրկարար դրոշը բանվորա-գյուղացիական անխորտակելի ուժով։

Մենք մեր բովանդակ հույսը լուսո և ապագա մեր երջանկության փառահեղ աստղը Կովկասյան Կարմիր հորիզոնին վրա կտեսնենք. մեր և մեր նոր սերունդի ապագան հոդ, միայն հոդ է, որ պիտի կարենանք տեսնել։ Այդտեղի գիտության նոր դարբնոցներուն մեջ է, որ Ձեր շնորհիվ ու հանուն կարմիր իրավակարգին կառուցած նոր քաղաքացիներ պիտի պատրաստվինք»։

Սփյուռքահայերի մի այլ խումբ Սովետական կառավարությանը ներկայացնելով հայ գաղթականների թշվառ վիճակը արտասահմանում գրել է. «...Գաղթականի ցուպը ձեռին, օտար երկինքներու տակ հուսարեկ ու գլխիկոր, գրեթե կյանք մուրացող հայության բեկորները իրենց

---

[1] «Խորհրդային Հայաստան», 16 մարտի, 1924, № 63։

[2] Հայկական ՍՍՌ ՀՊԿՊԱ, ֆ. 40/113. ց. 3, 258, թ. 43։

[3] Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 29 ապրիլի, 1924, № 96։

[4] «Խորհրդային Հայաստան», 16 մարտի, 1924, № 63։

[5] Հայկական ՍՍՌ ՀՊԿՊԱ, ֆ. 40/ 13, ց. 3, գ. 259, թ. 13—17։

[6] Դ. Շահվերդյանը այդ ժամանակ կ. Պոլսում Անդրկովկասյան առևտրական-տնտեսական ներկայացուցիչն էր և ՀՍԽՀ Ժողկոմխորհի ներգաղթի լիազորը։

[7] Հայկական ՍՍՌ ՀՊԿՊԱ, ֆ. 40/113. ց. 3. գ. 259, թ. 83—84։

աչքերը հառած են պատմական Արարատի ստորոտը հարության առնող, վերածնվող Մայր Հայրենիքին, անշուշտ այն խոր հավատքով, որ նրան իմաստուն վարիչները միշտ նկատի կունենան արտասահմանի իրենց տառապող եղբայրակիցներու ցավն ու թշվառությունը»[1]։

Միայն ներգաղթի մեջ տեսնելով իրենց իսկական փրկությունը, նրանք գոչում էին.

«Ներգա՛ղթ, ներգա՛ղթ կպոռան հայ խլյակներ։ Թյուրավորներ անպատսպար կթափառեն ու գործ կմուրան։

Միակ և գլխավորագույն սպեղանին ներգաղթն է, որ հնարավորություն պիտի տա բազմաթիվ շինարար բանվոր բազուկներու գործ հայթայթելու, ի փոխարեն նույնիսկ չոր հացի մը, հոգ չէ թե գաշտերու մեջ ժամանակավորապես վրաններու տակ պատսպարվելով, միայն թե մեր երկնքին տակ գտնվելու մխիթարությունը ունենանք։

Մեր միակ հույսը կմնա ներգաղթը, որուն փութով իրականացման համար, պաղատագին կխնդրենք ձեր ընկերական հեղինակությունը, ձեր միջամտությունը։ Ամեն օր դժբախտություն ունինք լսելու անպատմելի թշվառություններ, շվարուն և անել կացության մը մատնված ենք, հույսի միակ ակը և լույսի միակ փարոսը ներգաղթն է։

Ակընդետ կսպասենք Ձեր ընկերական արդյունավոր պատասխանին և ներգաղթը ավետող պատմական գրությանն»[2]։

Սովետական կառավարությունը, ընդառաջելով սփյուռքահայերի բուռն ցանկություններին, լայն չափերով կազմակերպեց նրանց հայրենադարձությունը։

1924 թ. մարտի 3-ին, ՀՍԽՀ Ժողկոմխորհի միջնորդությամբ, Անդրկենտգործկոմի նախագահությունը որոշում է կայացնում 1924—1925 թթ. ընթացքում արտասահմանից, հիմնականում Հունաստանից, Միջագետքից և Թուրքիայից, Սովետական Հայաստան ընդունել 10 000 գաղթականներ և նրանց տեղավորել Սարդարաբադի տրեխյան մասում՝ նախօրոք այն դարձնելով ոռոգելի։

ՀՍԽՀ Հողժողկոմատը և Ներքգործժողկոմատը կազմում են 10 000 գաղթականների փոխադրության և տեղավորման հետ կապված ծախսերի նախահաշիվը՝ 1 680 366 ռ. 06 կ. գումարով։ Այդ ծրագրին համապատասխան 1924 թ. մայիսից սկսվում է ներգաղթողների մուտքը Հայաստան՝ Բաթումիի, Ջուլֆայի և Մարգարայի վրայով[3]։

1924 թ. հոկտեմբերի 15-ին ՀՍԽՀ Ժողկոմխորհը քննարկում է Ներքգործժողկոմատի զեկուցումը՝ Հայաստան ներգաղթող 10 000 գաղթականների ընդունելության, տեղավորման, հողի հետ կապելու և այլ միջոցառումների մասին և որոշում այդ նպատակով լրացուցիչ գումարներ խնդրել Անդրֆեդերացիայի Ժողկոմխորհից և ՍՍՌՄ կառավարությունից։ Միաժամանակ առաջարկվում է Գյուղատնտեսական և Կոմունալ բանկերին՝ ներգաղթածների համար բացել երկարատև վարկեր գյուղատնտեսական գործիքներ, սերմեր և շինանյութեր ձեռք բերելու նպատակով։ Որոշվում է նաև Հողժողկոմատի ֆոնդերից Ժողկոմխորհի հաշվին շինափայտ տրամադրել նրանց՝ երկաթուղային կայարանների մոտիկ վայրերում[4]։

Այս որոշումներին համապատասխան, 1924 թ. ընթացքում Հունաստանից, Սիրիայից, Կ. Պոլսից և այլ վայրերից երկիր ընդունվեցին 4167 գաղթականներ ու որբեր, որոնք հիմնականում տեղավորվեցին Երևանում և Լենինականի գավառում[5]։

Սկսած 1925 թ. ներգաղթի և գաղթականության տեղափոխման-տեղավորման ուղղությամբ աշխատանքները տարվում են ավելի կազմակերպված և պլանային կարգով։ Ներգաղթի ու բնակեցման գործը կենտրոնացնելու և ուժեղ թափով առաջ տանելու համար 1925 թ. սեպտեմբերին հիմնադրվում է Ժողկոմխորհին առընթեր Աշխատավորական ներգաղթի հանձնաժողով, Ժողկոմխորհի նախագահի տեղակալ Ասք. Մռավյանի նախագահությամբ և Օ. Դուրգերյանի, Հ. Բալյանի, Ա. Երզնկյանի, Ս. Մելիք-Հովսեփյանի ու Գ. Գողթունու անդամակցությամբ[6]։ Այդ հանձնաժողովի միջոցով լուծում էին ստանում գաղթականությանը վերաբերող սկզբունքային բնույթ կրող բոլոր հարցերը, իսկ Ներքգործժողկոմատը դրանք կիրառում էր կյանքում։

Որքան ավելի էր ուժեղանում ներգաղթողների հոսանքը դեպի Սովետական Հայաստան, այնքան ավելի կատաղի ու չարանենգ գրպարտությունների էին դիմում դաշնակ գրչակներն ու

---

[1] Հայկական ՍՍՌ ՀՌԿՊԱ, ֆ. 178, ց. 1, գ. 975, թ. 19։

[2] Նույն տեղում։

[3] Նույն տեղում, ֆ. 40 113, ց. 3, գ. 419, թ. 153։

[4] Նույն տեղում, թ. 147։

[5] Նույն տեղում, գ. 418, թ. 28։

[6] Նույն տեղում, գ. 518, թ. 90—91 և գ. 415, թ. 13։

արտասահմանի հայկական բուրժուազիայի մյուս ձայնափողերը՝ ձգտելով ամեն կերպ խանգարել ներգաղթը, վարկաբեկել Սովետական Հայաստանը, ժխտել երկրում ծավալված սոցիալիստական շինարարությունը։

Բաղութահայ աշխատավորությունը, մերկացնելով իր թշնամիներին, բուռն կերպով ձգտում էր դեպի Սովետական Հայաստան՝ հակառակ նրա շուրջը հյուսվող բոլոր բարբաջանքներին ու ստոր զրպարտություններին։

Պատասխանելով այդ կարգի զրպարտիչներին, Հունաստանից Սովետական Հայաստան ներգաղթող մի խումբ աշխատավորներ 1925 թ. հունվարին գրել են. «Մեր վերջնական օթևանի՝ ՍԽՀ Միության ցավագար և անակոա թշնամիները ալ սուտ ու զրպարտություն չմնաց, որ չգրեին ու չխոսեին ներգաղթին շուրջը։

Մենք, ներկա ստորագրելիս, մոտ օրեն հին Հունաստանի այլևայլ վայրերեն Խ. Հայաստան պիտի մեկնինք, մեր սրբազան պարտականությունը կհամարինք սույն կոչով զգուշացնել դեպի մեր պաշտած հայրենիքը մեկնողները, որ շրջան բնող չարանենգ զրույցներուն և բսի բսավներուն բնավ կարևորություն չտան...»[1]։

Այնուհետև մերկացնելով դաշնակ զրպարտիչների կոնկրետ պրովոկացիաները, կոչի հեղինակները շարունակում են. «...հոն, մեր տենչալի հայրենիքի մեջ մեզի պիտի տրամադրվին հող, յծկան, գործիք և ատաղձ, որմե բոլորս ալ զուրկ ենք, քանի դեռ կմնանք օտար հորիզոններու տակ։

Հայրենակիցնե՛ր, զգույշ և միշտ զգույշ մեր տունն ավերող և մեզ մոխրիներու վրա նստեցրնող օտար, կեղծ մարդասերներեն և տարաբախտաբար հայ կոչվող իսառնակիչներեն, որոնք խիղճերնին սպանած և ամոթի ու պատասխանատվության զգացումնին կորսնցուցած ըլլալով իսպառ, իրենց աղտոտ ձեռքերով կուզեն խառնել Ձեր խիղճին անդորրությունը։

Ձոհ մի ըլլաք բանսարկու լեզուներու և վաճառված գրիչներու խարկանքներուն, որոնք կմիտին ձեր մեջ թշնամանքի որոմ սերմանել։ Վստահ ըլլալով, որ մոտ է այլևս մեր փրկության ժամը, կազմ ու պատրաստ եղեք դեպի Ավետյաց աշխարհը մեկնելու»։

Չնայելով ոչ մի խոչընդոտի, զրպարտության ու պրովոկացիայի Սովետական կառավարությունը, երկրի ժողովրդական տնտեսության վերականգնման բնագավառում ձեռք բերած հաջողություններին զուգընթաց, ավելի լայն թափով ու ծրագրված կարգով իրականացնում էր սփյուռքահայ աշխատավորների հայրենադարձությունը։ 1925 թ. նախորդ մշակված պլանի համաձայն, Բաթումիի ու Ջուլֆայի վրայով, արտասահմանից Հայաստան են ներգաղթել 5016 մարդ, այդ թվում Հունաստանից՝ 3651 հոգի, 1098 ընտանիք, Կ. Պոլսից՝ 781 հոգի, 201 ընտանիք, Բաղդադից և ընդհանրապես Միջագետքից՝ 385 հոգի, 160 ընտանիք։ Միաժամանակ կատարվել են ներքին տեղափոխումներ ու տեղավորումներ սակավահող շրջաններից դեպի համեմատաբար հողառատ վայրերը։

Նախատեսված էր ներգաղթողներին տեղավորել Արաղդայանում, և Ժողկոմխորհի որոշմամբ այդ նպատակով ստեղծվել էր Արաղդայանի ներգաղթի հանձնաժողովը, որը և կատարում էր բոլոր ընթացիկ աշխատանքները։

1925 թ. ներգաղթողների մի զգալի մասը Հայաստան է ժամանում ուշ աշնանը՝ նոյեմբերին, մի մասը, որպես արհեստավորներ ու բանվորներ, բնակություն են հաստատում Երևան, Լենինական քաղաքներում ու այլ վայրերում, իսկ մոտ 1500 հողագործներ տեղավորվում են Արաղդայանում։ Շուտափույթ կարգով վերջիններիս համար կառուցվում են փայտյա ժամանակավոր տներ, բաղնիք, հիվանդանոց, դպրոց, արհեստանոց, խանութ և այլն։

Հայրենադարձների զգալի մասը չքավորներ ու որբեր էին և, բնականաբար, նյութական օգնության կարիք էին զգում, ուստի Ժողկոմխորհին առընթեր Աշխատավորական ներգաղթի հանձնաժողովի որոշմամբ ավելի քան 500 հոգի սնվում էին պետության հաշվին, իսկ մյուս մասին լժան գներով տրվում էր հաց և այլ մթերքներ[4]։ Ներգաղթածների համար 1926 թ. գարնանը Արաղդայանի շրջանում հիմնադրվում են 4 գյուղեր, հատկացվում հողաբաժիններ, սերմացու և վարկ՝ իրենց սեփական տնտեսությունն ստեղծելու համար։ Նորակառույց չորս գյուղերն

---

[1] Հայկական ՍՍՌ ՀԱԿՊԱ, ֆ. 40 113, ց. 3, գ. 496, թ. 46։

[2] Նույն տեղում։

[3] Նույն տեղում, գ. 377, թ. 3 և գ. 496, թ. 19։

[4] Հայկական ՍՍՌ ՀԱԿՊԱ, ֆ. 30 116, ց. 1, գ. 335, թ. 121—127։

էին՝ Արագդայանը, որտեղ տեղավորվեցին 99 ընտանիք՝ 290 մարդ, Արմաշը՝ 114 ընտանիք՝ 334 մարդ, Սուրենավանը՝ 34 ընտանիք՝ 112 մարդ և Սմոն՝ 47 ընտանիք՝ 172 մարդ[1]։

Առաջին գարնանը նրանց հողերը հերկվում են սեփական միջոցներով կամ վարկային սկզբունքներով։ Չորս գյուղերում վարվել է 397 դեսյատին տարածություն, որից 235 դեսյատինը Գյուղբանկի միջոցով, 65 դեսյատինը՝ Արագդայանի աշխատավորական ներգաղթի հանձնաժողովի կողմից և 97 դեսյատինը՝ Դավալուի վարկային ընկերության կողմից։ Միաժամանակ նրանց տրվել են գյուղատնտեսական գործիքներ, բամբակի, բանջարեղենի սերմեր և այլն. դա երևում է հետևյալ աղյուսակից[2]։

Գյուղերի անունները	Գարի	Եգիպտացորեն	Ոչխարներ	Գառներ	Դուլեր	Թորխիներ	Թիեր և կոթեր	Եզներ և կոթեր
Արագդայան	8820 փ.	31փ 15ֆ	121	121	88	75	84—84	44—100
Արմաշ . .	6562 փ.	36փ	142	142	124	167	106—112	98—27
Ավշար . . .	368 փ.	14փ15ֆ	47	47	39	57	8—	45- 25
Սմո . .	—	9փ35ֆ	—	—	45	47	28—29	43—48
Ընդամենը	15.750փ	90փ65ֆ	310	310	296	286	226 225	230—209

Վերոհիշյալից բացի՝ այդ չորս գյուղերում բնակություն հաստատած ներգաղթած տնտեսությունները ստացել են նաև 50 զույգ եզ, 60 լուծ, 60 կամ, 20 գութան, 394 մանգաղ, 294 գերանդի, 75 փոցխ, 30 զնգան, 20 սայլ և այլն։

Ներգաղթածները 1926 թ. գարնանը ցանել էին 83 դեսյատին գարի, 123,5 դեսյատին բամբակ, մոտ 39 դեսյատին բանջարանոցային կուլտուրաներ, 21 դեսյատին խոտարույսեր, 27,5 դեսյատին եգիպտացորեն և այլն։ Տեղի բնակլիմայական պայմաններին անծանոթ ներգաղթածներին օգնելու համար Հոլժողկոմատը նրանց մոտ է ուղարկում մասնագետ գյուղատնտեսներ։ Արագդայանի շրջանում տեղավորված ներգաղթածներին հատկացված հողամասերը ջրով ապահովելու համար Ջրային տնտեսության կողմից վերանորոգվում է նախկին «Կախանովի» ջրանցքը և Արաքսից խմելու ջուր է մատակարարվում։ Պիտանի հողամասերի տարածությունն ընդարձակելու նպատակով Սուրենավան և Արմաշ գյուղերի շուրջը ջրհան մեքենայով ոռոգելի է դարձվում 150 դեսյատին հողամաս։ Քանի որ ներգաղթածների մեջ կային հմուտ ծխախոտագործներ, իսկ ծխախոտի մշակությունը Հայաստանում ուներ մեծ հեռանկարներ, Արմաշ գյուղում կազմակերպվում է ծխախոտագործների մի կոոպերատիվ միություն, բաղկացած 57 տնտեսությունից։ Ծխախոտի մշակությամբ էին զբաղվում նաև մի քանի մասնավոր տնտեսություններ՝ ուրիշ գյուղերում։

1925 թ. ընթացքում ներգաղթած բնակչության համար մինչ 1926 թ. կեսերը կատարվում է հսկայական շինարարական աշխատանք։ Արագդայան գյուղում կառուցվում է 12 նոր տուն և վերանորոգվում նախկին Շերեմետևի ընկերության գործարանից 63 սենյակ, ուր տեղավորվում են 93 տնտեսություն՝ 271 շնչով։ Արմաշում կառուցվում է 34 շենք, որտեղ բնակություն են հաստատում 104 տնտեսություն՝ 311 բնակիչներով։ Ավշար գյուղում կառուցվում է 12 շենք՝ 35 ընտանիքի համար, որոնց անդամների թիվը հասնում էր 112 մարդու։ Սմո ներգաղթած բնակիչները իրենց տրամադրված շինանյութերով վերանորոգում են քանդված նախկին շենքերը, ուր տեղավորվում են 47 ընտանիք, 172 շնչով[5]։

---

[1] Նույն տեղում, ֆ. 123, ց. 1, գ. 1576, թ. 13—15։
[2] Նույն տեղում, ֆ. 30/116, ց. 1, գ. 335, թ. 121—127։
[3] Նույն տեղում։
[4] Նույն տեղում։
[5] Հայկական ՍՍՌ ՀՌԿԳԱ, ֆ. 30/116, ց. 1, գ. 335, թ. 121—127։

Ներգաղթի կազմակերպման, ներգաղթողների տեղափոխման, տեղավորման և այդ կապակցությամբ կատարվող մյուս աշխատանքները պահանջում էին նյութական հսկայական միջոցներ։ Սովետական Հայաստանի կառավարությունը իր բյուջեից միշտ էլ զգալի մասհանումներ է կատարել այդ նպատակի համար։

1923 թ. ընթացքում ներգաղթած 953 հոգու համար ՀՍԽՀ Ներքգործժողկոմատի գաղթականական բաժնի կողմից ծախսվել է 22 500 ռուբլի ոսկով, կամ 246 միլիարդ 798 միլիոն ռուբլի Անգրֆեդերացիայի դրամանիշներով[1], չհաշված հացահատիկով և այլ պարենամթերքներով նրանց ցույց տրված օժանդակությունը։ 1925 թ. ներգաղթածների կարիքները հոգալու նպատակով, ըստ կազմված նախահաշվի, ծախսված գումարը կազմել է 418 250 ռուբլի[2]։

Ներգաղթի և բնակեցման գծով վարկավորվողները բաժանվում էին երեք խմբի։ Առաջին խումբը արտասահմանից և այլ ռեսպուբլիկաներից ներգաղթողներն էին, երկրորդ խումբը՝ երկրի ներսում մի տեղից մի այլ վայր տեղափոխվող գաղթականները, որոնք նոր բնակավայրում չունեին բնակարաններ ու գյուղատնտեսական գործիքներ և, վերջապես, երրորդ խումբը այն գաղթականներն էին, որոնք չնայած բավարարված էին հողամասերով, բայց գտնվում էին ծայրահեղ չքավորության մեջ և բնակարան չունեին։

Չորս հոգուց բաղկացած մեկ ընտանիքի համար ըստ խմբերի սահմանված էր վարկի հետևյալ չափը[3].

Ըստ խմբերի	Վարկերի գումարը					
	գույքամորման	շինարարական	նոր բնակավայրում 4 ամիս անուանգով ապահովելու համար	տեղափոխման	բժշկ. օգ.	ընդամենը
1-ին խումբ	310 ռ.	400 ռ.	52 ռ. 50 կ.	18 ռ.	7 ռ. 50 կ.	788 ռ.
2-րդ խումբ	110 ռ.	200 ռ.	—	6 ռ.		316 ռ.
3-րդ խումբ	—	200 ռ.	—	—		200 ռ.

Արտասահմանից և այլ վայրերից ներգաղթողները, ինչպես երևում է վերը բերած աղյուսակից, ստանում էին անհրաժեշտ միջոցներ՝ բնակելի տներով, գյուղատնտեսական գործիքներով և այլ պարագաներով ապահովվելու համար։ Երեք խմբերի համար աղյուսակում ցույց տրված սննդի, բժշկական օգնության և տեղափոխման ծախսերը հաշվվում են անվերադարձ գումարներ։ Գույքավորման և շինարարական վարկերը տրվում էին երկարատև և նպաստավոր պայմաններով, այն է՝ գույքավորմանը՝ 6 և շինարարականը՝ 10 տարի ժամկետով։ Արտասահմանից ներգաղթողները և նոր գյուղերում հաստատվողները, համաձայն Կենտգործկոմի 1925 թ. հունվարի որոշման, առնվազն 3 տարի ազատվում էին ամեն տեսակ հարկերից[4]։ Սովետական Հայաստան ներգաղթած բանվորները, արհեստավորներն ու այլ մասնագետները նույնպես հնարավորություն էին ստանում վայելելու ազատ աշխատանքի պտուղները։ Նրանց ևս ընձեռվում էին համապատասխան արտոնություններ, ապահովվում էին աշխատանքով առաջին հերթին, ստանում էին վարկ և այլն։

Սովետական կառավարության ամենօրյա հոգատարությունը կարճ ժամանակամիջոցում գաղթականության տնտեսական վիճակի բարելավման իսկական երաշխիքն էր։

Հայրենադարձների շնորհիվ Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսությունը ձեռք էր բերում հմուտ ու առաջնակարգ մասնագետներ, որովհետև ներգաղթածների մեծ մասը որակյալ բանվորներ ու արհեստավորներ էին, իսկ մի զգալի մասն էլ՝ թանկարժեք կուլտուրաների մշակման առաջնակարգ մասնագետներ։

[1] Նույն տեղում, ֆ. 112, ց. 1, գ. 1490, թ. 21։
[2] Նույն տեղում, ֆ. 123, ց. 1, գ. 1376, թ. 13—15։
[3] Նույն տեղում։
[4] Նույն տեղում։

Սփյուռքահայ աշխատավորները Հայաստան տեղափոխվելուց հետո, զգալով Սովետական կառավարության ջերմ վերաբերմունքն իրենց նկատմամբ, երախտագիտությամբ լի, անմիջապես լծվում էին շինարար աշխատանքի և ջանում կարճ ժամանակամիջոցում վերականգնել ավերված օջախները իրենց նոր, շահագործումից ու ստրկությունից ազատագրված սոցիալիստական հայրենիքում, միաժամանակ կոչ անում իրենց նախկին բախտակիցներին նույնպես վերադառնալ Սովետական Հայաստան։

Ահա այդ երախտագիտության վառ վկայություններից մեկը, որ արտահայտել են 1924 թ. ամռանը Կ. Պոլսից հայրենիք ներգաղթած մի խումբ աշխատավորներ արտասահմանի իրենց վտարանդի եղբայրներին ուղղված նամակներից մեկում.

«Բռնակալ կապիտալիստների երկրներում երկար թափառումներից հետո վերջապես հասանք Խորհրդային Միության սահմանները և Բաթումի ճամփով անցանք Խորհրդային Հայաստան։ Այն մարդավայել վերաբերմունքը, որ մենք վայելեցինք Խորհրդային երկրում ընդհանրապես, և այն ջերմ, սիրալիր ընդունելությունն ու հոգատար վերաբերմունքը, որ իր սուղ միջոցներով մեզ ցույց տվեց մասնավորապես Խորհրդային Հայաստանը, մեզ միանգամայն հիացրեց և մենք զգացված՝ մեր անկեղծ երախտագիտական շնորհակալությունն ենք հայտնում Խորհրդային Հայաստանի կառավարությանը, հայտնելով մեր պատրաստակամությունը՝ բովանդակ ուժերով լծվելու նրա ձեռնարկած կուլտուր-շինարարական աշխատանքներին։

Թող լսեն օտար երկրներում թափառող մեր աստանդական եղբայրները, որ միայն և միայն Խորհրդային Հայաստանում վերջ գտան մեր տառապանքները, և մենք տեսանք մարդկային, ընկերական վերաբերմունք, որին մինչև այժմ այնքան ծարավի էինք։ Այստեղ միայն գնահատվեց մեր աշխատանքը և կարելիություն տրվեց լծվելու շինարարության հսկա գործին, որը ղեկավարում է Խորհրդային կառավարությունը Հայաստանի աշխատավորության աջակցությամբ»[1]։

Այսպիսով, Սովետական Հայաստանի կառավարությունը, Հայաստանի Կոմունիստական պարտիան, ՍՍՌՄ և Անդրֆեդերացիայի կառավարությունների ամենալայն աջակցությամբ ու օգնությամբ, 1921—1925 թթ. իրականացրին սփյուռքահայ հազարավոր աշխատավորների հայրենիք վերադառնալու նվիրական իդեաները։ Բազմաթիվ աղբյուրների համադրման միջոցով մենք փորձել ենք դեթ մոտավոր հաշվարկման ենթարկել 1921—1925 թթ. ընթացքում արտասահմանից Սովետական Հայաստան ներգաղթածների քանակը և կազմել ստորև բերված աղյուսակը[2]։

Տարեթիվ	Որտեղից են ներգաղթել	Տնտեսությունների քանակը	Ներգաղթածների քանակը
1921	Գրավոր ստույգ տվյալներ չեն պահպանվել	—	—
1922	Միջագետքից, Պարսկաստանից, Կ. Պոլսից և այլ տեղերից	2001	2552
1923	Վանից և այլ վայրերից	258	953
1924	Հունաստանից, Կ. Պոլսից, Սիրիայից և այլ երկրներից	783	4167
1925	Հունաստանից, Կ. Պոլսից, Միջագետքից և այլ վայրերից	1459	5016
	Ընդամենը	4501 տնտ.	19,688 հոգի

Իրականում 1921—1925 թթ. ընթացքում Հայաստան ներգաղթածների թիվը շատ ավելին է, քան ցույց է տրված այս աղյուսակում։

1922 թ. հոկտեմբերին ՀՍԽՀ կենտգործկոմի կողմից կազմված մի տեղեկանքում նշված է, որ 1921 թ. մայիսից մինչև 1922 թ. մայիսն ընկած ժամանակամիջոցում (իսկ փաստորեն 1921 թ.

[1] «Խորհրդային Հայաստան», 7 հոկտեմբերի, 1924, № 229։

[2] Տե՛ս Հայկական ՍՍՌ ՀՄԿՊԱ., ֆ. 40/113, ց. 3, գ. 377. թ. 3, գ. 491, թ. 7 և 33—35, գ. 518, թ. 10, ֆ. 123, ց. 1, գ. 1640, թ. 31—35, ֆ. 30/116, ց. 1, գ. 335, թ. 121—127 և գ. 2352, թ. 19—28։

Հմմտ. նաև՝ «Խորհրդային Հայաստան—1921—1925 թթ.». ժողովածու, Երևան, 1926, էջ 69 և Հովհ. Հակոբյան, Խորհրդային Հայաստան (տպավորություններ և ուսումնասիրություններ), Փարիզ, 1929, էջ 253։

ընթացքում), Հայաստան են վերադարձել ավելի քան 247 000 գաղթականներ, որից 150 000՝ հայեր, ասորիներ ու եզդիներ, 97 000՝ մահմեդականներ, այսինքն ադրբեջանցիներ[1]։

Աղյուսակի թվերի մեջ տեղ չեն գտել սովետական մյուս ռեսպուբլիկաներից Հայաստան տեղափոխվածները, որոնց քանակը փոքր չէր այդ տարիներին։ Այնուհետև, երբեմն հաշվառման չեն ենթարկվել և ներգաղթողների բերված աղյուսակի թվերի մեջ չեն մտել նաև այդ տարիներին արտասահմանից Սովետական Հայաստան եկած շատ առանձին ընտանիքներ, փոքրիկ խմբեր ու անհատ անձնավորություններ[2]։

Այսպիսով, Սովետական կառավարությունը, 1921—1925 թթ. երկրի ժողովրդական տնտեսության վերականգնմանը զուգընթաց, արտակարգ հոգատարություն և ուշադրություն է ցուցաբերել նաև երկրում կուտակված գաղթականության ու սփյուռքահայ աշխատավորների բախտի նկատմամբ, առաջինների հարցի լուծման հետ միաժամանակ կազմակերպելով վերջիններիս առավել դժվարին կացության մեջ գտնվող մասի ներգաղթը դեպի հայրենիք, ուր նրանք լայն հնարավորություններ ստացան բոլոր ամենայնի կարճ ժամանակամիջոցում վերստեղծելու իրենց սեփական տնտեսությունները։

Նուտով ՀՍԽՀ Ժողկոմխորհի կողմից կազմվում է գաղթականության տեղավորման միջոցառումների հեղամյա հեռանկարային ընդարձակ պլան, որը լիովին ու վերջնականապես կբարելավեր հայրենադարձների տնտեսական դրությունը և իսպառ կվերացներ «գաղթական» անունը սոցիալիզմի ուղին թևակոխած Սովետական Հայաստանի տասնյակ հազարավոր լիիրավ ու ազատ քաղաքացիների վրայից[3]։

Ահա թե ինչու գաղութահայ աշխատավորները էլ ավելի բուռն կերպով ձգտում էին տեղափոխվել Սովետական Հայաստան։ Այդ տարիներին սկիզբ է առնում սփյուռքահայության ամենախրախուսելի շարժումը՝ ամբողջ հայրենակցական միություններով Հայաստան ներգաղթելու նշանաբանով։ Այդպիսի ցանկություններով ՀՍԽՀ Ժողկոմխորհին էին դիմում բազմաթիվ հայրենակցական միություններ, որոնք և 1923 թ. սկսած ու ավելի լայն թափով 30-ական թվականներին Սովետական Հայաստանում «նորը» մասնիկի կցումով հիմնեցին իրենց ծննդավայրերի անունով հայրենադարձների բազմաթիվ գեղեցիկ ավաններ։

Այսպիսով, իր գոյության առաջին իսկ օրերից, Սովետական Հայաստանը դարձավ համայն հայ աշխատավորների իսկական օրրանը, այն հանգրվանը, որտեղ հետագա տարիներին էլ ավելի մեծ թվով սփյուռքահայեր վերջնականապես գերեզմանեցին գաղթականի իրենց անիծյալ ցուպը և դարձան սոցիալիստական շինարարության ակտիվ մասնակիցներ, Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի լիիրավ քաղաքացիներ։

РЕПАТРИАЦИЯ ЗАРУБЕЖНЫХ АРМЯН В СОВЕТСКУЮ АРМЕНИЮ (1921—1925)

О. У. МЕЛИКСЕТЯН

(Резюме)

В статье на конкретных примерах показано, как правительство Советской Армении с помощью Советской России и других братских республик вместе с восстановлением народного хозяйства страны постепенно разрешало вопрос беженцев: обеспечивало их жильем, землей, сельскохозяйственными орудиями и т. д. После нормализации жизни беженцев, находившихся в Армении, Советское правительство стало непосредственно заниматься вопросом репатриации армян на родину из-за рубежа.

В статье отражено усиление симпатии зарубежных трудящихся-армян к Советской Армении, приводятся их многочисленные письма с выражением желания возвратиться на родину. Советское правительство, идя навстречу этим патриотическим стремлениям, с конца 1921 года по 1925 год осуществило репатриацию из Турции, Греции, Месопотамии, Сирии, Франции и других стран более 20 тысяч трудящихся-армян, которым были предоставлены особые льготы, созданы условия для мирной, созидательной жизни. На родной, свободной земле армяне-репатрианты вместе со всеми трудящимися республики активно включились в социалистическое строительство.

---

[1] Տե՛ս Հայկական ՍՍՌ ՀԱԿՖԱ, ֆ. 112, ց. 1, գ. 8, թ. 135։
[2] Տե՛ս «Երևան», Փարիզ, 21 հուլիսի 1929, № 534։
[3] Հայկական ՍՍՌ ՀԱԿՖԱ, ֆ. 112, ց. 1, գ. 318։